

Հ Ր Ա Մ Ա Ն N 3-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«09» ՀՈՒՆՎԱՐԻ 2020 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 704-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացի իրականացման նպատակով ստեղծել հանձնաժողով՝ (այսուհետ՝ Հանձնաժողով) հետևյալ կազմով.

Սրբուհի Գալյան

Արդարադատության նախարարի տեղակալ,
(Հանձնաժողովի նախագահ)

Հանձնաժողովի անդամներ՝

Լուսինե Մարտիրոսյան

Արդարադատության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ-մամուլի քարտուղար

Արփինե Սարգսյան

Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Եփրեմ Կարապետյան

Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության փորձագետ

Մարիամ Գալստյան

Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության

հակակոռուպցիոն քաղաքականության մշակման
բաժնի պետ (Հանձնաժողովի քարտուղար):

2. Հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի
հունիսի 24-ի N 808-Ն որոշմամբ սահմանված կարգով կազմակերպել հասարակական
կազմակերպությունների ներգրավման գործընթացը:

1/9/2020

X



Rustam Badasyan

ՌՈՒՍԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ